29. ՋԸՀՈՒԴ

Կէղնի, չէղնի ջըհուդ մարդըմ կէղնի։

Էդ մարդ կկարգվի։ Էրկու-իրեք տարի կմնա, ուրեն ախչիկըմ կէղնի։ Կնիկ կմեռնի։

Էդ կնկան ջուխտըմ թաժա սոլ կէղնի։ Էրիկ կասե, «Ուխտ էղնի, արարած աշխարք շուռ պիտի հ'իգամ՝ շուրի իդա սոլերու չափով օտկ չգտնամ, չկարգվիմ»։

Կէլնի կառնե զէդ սոլերն ու կընկնի հ'երկրներ կօլըրտի, տեխ չմնա. օր չօլըրտի։ Բըլե չը կըռնա ուր հ'առջին կնկա սոլերու չափով օտկ գտնա։

Կառնե սոլերն ու կդառնա կիգա ուր տուն։

Կիգա ախչկան կպատմե, կասե.— Ախչի, ես իդա աշխար հ'ըմեն օլըրտա՝ ըպա քու մամու պես իսկի կնիկըմ չգտա, օր զէդ սոլերն հագներ, ուրմշեր ուրեն, հ'ուզենք ընծիկ։

— Է, աբո, էլ հըմալըմ մը նեղենա, թե օր էդ սոլերով օտկ չէղավ, ուրիշ կնիկ չէղնի՞։ Ըշթա էդ սոլով օտն է ու չկա, ի՞նչ էնինք, խո չընք մեռնի։ Տուր զէդ սոլեր, ես հագնեմ, բոբիկ իմ, կէրթամ ջուր ու կիգամ։

Պապն կասե.— Դը առ, հագի, քանի օր քու աչք մանցեր է հ'ինկ։

Ախչիկ կվերցու ու կհագնի սոլերն, կտեսնա, օր սոլերն ուր օտնով է։

Պապ լէ կտեսնա, օր սոլեր ախչկա օտներով է, կասե.— Ախչի, քանի օր ես ուխտ իմ էրի էդ տոլերով մեկըմ չգտնամ՝ չկարգվիմ ու հմկա էդ սոլեր քու օտներով մինակ կէղնի, զքզի պիտի առնիմ։

— Տո, աբո, պապ իմա՞լ զախչիկ կառնե, չէ մե՞ղք ա։

Պապն կասե.— Է՛, լաո, ես ինչ էնիմ, ուխտ իմ էրի։

Ախչիկն կասե.— Մատամ օր կառնիս, մեղք քու վիզ էղնի։ Ընծիկ սնտուկըմ շինե, ըի, օր մեջու դին օսկի էղնի, դրսուդին լե՝ արծաթ, ուր փակ ու բալնիք լե միջու դիեն էղնի, սորա առ։

Պապ ձեն չհանե, կասե.— Քանի օր դու կուզիս, ես լե կշինիմ, ըներիմ։

Կէլնի չորս հարիր օսկի կխարճե, նոր զախչկա հ՝ուզած սնտուկ կշինն, բերե։

Եր օր սնտուկ կշինե խըլըսի, կասե կընկան (ախչկան).—Կնիկ, ես վաղ պիտի էրթամ իմ բարեկամի տուն, զուրանց կնիկ ու ճիժ ժողվիմ, ըներիմ, օր մզիկ քեֆ էնենք։

Ախչիկն կասե.— Դու դինաս։

Հ՝նլավ լուսուն ու գնաց։

Ախչիկն էր, շատ խորունկ մտածեց. «Տո ջանըմ,—ասեց,— ես իմալ էնեմ, օր հ՝իգա, դիս չտեսնա»։

Կէլնի, կառնի ուրեն էրկու-իրեք ավուր հաց ու կմտնե սնտրկի մեջ ու ներսեանց զղուտ աղեկըմ կփակե վըր ուրեն։

Պապն էր, դառցավ էկավ, հ՝ուր օր զարկվավ, ախչիկ չգտավ։ Ասեց. «Ես ուխտ ու վագա պիտի էնեմ, օր հընչի զիմ կնիկ չգտնամ, էդա տուն չիգամ, կանի, ախըր էդա սնտուկ ուր նշանական է, հ՝առջին հեղ թալիմ՝ ծով, նոր հ՝ընկնեմ ուր ետևեն»։

Առավ սնտուկ, տարավ թալեց մըջ ծովուն ու ինկ դառցավ էկավ, առավ զուր փետ ձեռք, հ՝ընկավ ճամբախ՝ ախչկա ետև։

Հայ հըր թըղ էրթա ախչկա ետև օլըրտի, մենք դառնանք վըր սնտկին։

Սնտուկն է, ծովու հ՝երես օր հընկավ, շատ ու քիչ գնաց, հ՝ըռաստ էկավ էրկու լողվորի, էդ լողվորներ լե զանկին մարդըմ բռներ էր, դրի ծովու պռուկ, ձուկ կբռնեն ուրեն։

Զանկին մարդ լե կանուկ էր ծովու պռուկ՝ լողվորներու մոտ։ Տեսավ հետևանց, օր բանըմ ծովու հ՝երես կտրռտրզա, կիգա։

Ասեց լողվորներուն.— Էդա բան օր կիգա, թե օր օսկի, արծաթ էղավ՝ ձըզիկ, իսան էղավ՝ ընծիկ։

Լողվորներն ասին.—Աղեկ կասիս, թը քու խոսքն էղնի։

Սնտուկ էկավ, մոտեցավ ծովի պռկին։ Լողվորներ հասան, բռնին։ Տեսան օր օսկի սնտուկըմ էր։

Ասին զանկին մարդուն.— Սնտուկըմ է, ինչ պիտի էղնի էդոր մեջ, քզիկ բան չկա հ՝ինկ, մըրն է։

Զանկին մարդն ասեց էդ լողվորներուն.— Դուք էրկու հոգի իք, զէդ օսկի սնտուկ իմա՞լ պիտի կիսիք վըր ձզիկ օր չկովիք։ Կիտամ ձզիկ

բանըմ փարա, զէդ սնտուկ տվեք ընծիկ, զփարեն կիսեք վիրարու, էլ աղեկ է։

Լողվորներն ասին.— Քու խոսք թըղ էղնի։

Տվին զսնտուկ էդ զանկին մարդուն, ուրանց առան բոլամա փարա, կիսին վիրարու։

Զանկին մարդն է, վերուց զէդ սնտուկ, առավ էկավ ուր տուն։

Օր զսնտուկ բերեց տուն, վախեցավ ասեց.

— Ես կէրթամ դես ու դեն, վախենամ իմ կնիկ հ'ելնի զէդ սնտուկ ծախե։

Հ'ելավ զկնիկ ճամբըցուց ուր պապու տուն։

Մարդն է, հ'ըմնոր կփակեր զդուռ վըր սնտըկին ու կէրթեր սար նեճրութենի։ Էն մեկ օր, օր գացեր էր սար, ախչիկ սնտկի դուռ բացեց, հ'ելավ դուրս։

Զտախտ ու տուն էնեց, թունդիր վառեց, ջուր բերեց, զատ էփեց, զատի կեսն կերավ, կեսն թողեց պուտկի մեջ, էփեց խահվա, զկես խմեց, զկես թողեց ճավզի մեջ, չայ շինեց, զկես խմեց, զկես թողեց չայնիկի մեջ, գնաց մտավ սնտկի մեջ ու ներսևանց զդուռ փակեց վըր ուրեն։

Էդ մարդն հ'իրկուն օր սարեն էկավ, տեսավ օր տախտ ու տուն էնուկ էր, հաց ու ջուր հազըր էր, չայ էնած են, կես խմած են, կես թողած են չայնըկի մեջ, խահվեն էն քեազա, շատ մթալա էնեց, իսկի բանըմ չկառցավ հաներ հ'իրարուց, գնաց դրկիցներուց հարցուց։

Դրկիցներ ասին.—Մենք խապար չունենք։

Ըպա ասեց. «Էդի ո՞րն է հ'էսօր էկի մտի իմ տուն»։ Ինչ էրեց, չկըռցավ գտավ։

Ասեց. «Տո, կանի խըրսար էղնի վըր իմ հոգուն, օր ես վաղ պատրվտիմ, իշքեմ տեսնամ՝ էդի ո՞րն է կիգա մտնի իմ տուն, բռնեմ»։

Լուսուն հ'ելավ, էլ չգնաց ավճութենի, բացեց զդուռ, մտավ դռան ետև, պատրվտավ։ Իշքեց օր, ախչիկ սնտկի մեջեն հ'ելավ, հմալ խորոտ էր, օր ախչկա շավխ առավ ուր քիթն ու բերան, ուշք հ'ընցավ, հ'ընկավ դետին։

Ախչիկ էդ բանեն խապար չուներ, հ'ընկեր էր ուր գործու հետ, էմլե զտախտ ու տուն էնեց, զատ էփեց, զատի կես կերավ, կես թողեց, չայ շինեց, չայի կես խմեց, կես թողեց չայնիկի մեջ, խահվա շինեց, կես խմեց, կես թողեց ճավզի մեջ ու գնաց, օր մտներ սնտըկի մեջ, էդ մարդու ուշք էկավ հ'ինկ, հ'ելավ վաղեց, հ'ետևանց զախչիկ բըռնեց։

Օր բռնեց, ախչիկն ասեց.— Զքու անահուն աստվածն օր կսիրես, թե օր կարգուկ իս՝ իմ մեղքի տակ չմտնիս, թե կարգուկ չիս՝ զաթան վայելենք զիրար։

Մարդ զուր կարգվել ինքյար էրեց, ասեց.— Ես ազապ իմ։

Ըդ տեխ էդ մարդու զոքանչ, յանի հ՝առջի կնկա մամ, ասեց.— Ջանըմ, ինչ թմավ իմ փեսին, օր էլ ուր կնկա ետևան իսկի չէկավ։ Հ՝ավալ մեկ սահաթ օր զմզիկ չտեսներ, սրպր չիգեր։ Տո վալլահի, ես պիտի հ՝ելնիմ էրթամ, տեսնաք ի՞նչ է էղիր էդոր. կա՞, չկա՞, իմա՞լ է, իմա՞լ չէ, հիվընդցե՞ր է, չհիվընդցեր է։

Հ՝ելավ էկավ, տեսավ օր նստուկ է, հաց կուտե։

Բարև տվեց, առավ զրարև ու ասեց.

— Արի, նստի։

Պառավն ասեց.— Ինչ նստեմ, իդա էրկու ամիս կէնե, օր ոքու կնիկ ճամբցուցեր իս, իսկի ուր ետևան չըս իգա, ինչ խավմավ քի՞։

Մարդն վերուց ասեց.— Նանե, ես իմա՞լ էնեմ, աստված զիմ մեղկ տվեր էր իմ Երևս, էդա ամիսըմ հիվանդ ենք, նոր հ՝էլեր իմ։

Զրուցկի մեջեն, պառավ ղսնտուկ տեսավ, հարցուց ուր փեսից.

— Իդա սնտուկ ե՞ք իս առի։

Փեսեն պատմեց, թե.— Գտեր իմ, հ՝ընցած օր ծովու վրեն կիգեր, ղլողվորներ տարեր ենք, ձուկ կբռնեն, ասի՝ գացեք հանեք, օսկի արծաթ օր էղավ՝ ձրզիկ, իսան էղավ՝ ընծիկ։ Էկավ մոտեցավ, օր էդ սնտուկն էր, տվեցի բանրմ լողվորներուն, ղսնտուկ առա ընծիկ, բերի տուն։

Պառավ կասե.— Էդ սնտուկ շատ խորոտ է, տուր տանիմ, իմ ախչիկ թըղ տեսնա։

Տղեն էդտեխ ինքն ուրեն կմտածե, կասե, թե. «Զէդ սնտուկ իտամ տանի, վայտե կուահեն, թե ախչիկ հ՝ինկն է, ղայ էնեն, թե չիտամ՝ վայտե ասեն, թե՝ էդ մարդ սնտուկըմ էր առի, ու մըլյաթ չէրեց տվեց»։

Հար հ՝ուր օր թալեց, յախա չաղատեց պառվուց, տաքցուց զէրես, հ՝ելավ շալկեց ղսնտուկ ու առավ ղնաց։

Պառավն առավ ղսնտուկ, գնաց։ Տարավ դրեց վըր կրակին, կհալեցներ։

Տաքութեն զորեց սնտրկի մեջ, ախչիկ էլ չրկառցավ տումեց, բացեց ղսնտկի դուռ, մեջեն հ՝ելավ դուրս։

Եբ օր հ՝ելավ դուրս, պառավն ու ուր ախչիկ էղան մեկ, թափան վըր էդ ախչկան, հմալ ծեծին, օր իսկի ուր տեխեն չրկրռցավ հ՝ելավ։

Բռնեցին դրին մեջ սնտրկին էմլե, սնտրկի դուռ փակին ու ճամբըցին, էկավ։

Հ՝իրկուն էր, էդ մարդ տեսավ, օր սնտրկի մեջեն տրքու մը կիգեր։

Էկավ սնտրկի մոտ, ախչկան պոռաց, ասեց.— Ախչի, ղսնտրկի դուռ բաց, տեսնամ ի՞նչ է էղի քզիկ։

Ախչիկ օր սնտրկի դուռ բացեց, մարդ իշքեց, տեսավ օր ախչիկ հատեն հիվանդ է։

Ախչկաց հարցուց.—Ախչի, ըդ ի՞նչ է էղի քզիկ։

Ախչիկն ասեց.— Հայ, քու աչք քոռներ, զիս չՃամբըցներ հ՝ոնի, ի՞նչ կհարցուս։ Վալլահի, զիս օր տարան, տարան զսնտուկ դրին վըր կրակին, տաքութեն զորեց սնտըկի մեջ, չըկրռցա, բացի զսնտուկ, հ՝ելա դուրս։ Ես օր հ՝ելա դուրս, մամ ու ախչիկ զիս օր տեսան, հմալ զարկին զիս, օր պատա գետին, իսկի խապար չէղա հ՝իսնե։

Մարդ զէդ օր կլսե, նոր կբերե էրկու-իրեք հարիր օսկի կիտա հեքիմներուն, զկնիկ կիտա սաղցնել։

Ժամանակըմ կմնա։ Էդ կնկաց տղե մը կէղնի։ Էդ տղեն շատ խորոտ կէղնի։ Հ՝ըմնօր իրկա ու կնկա ուրախութեն վըր էդ տղեն է։

Էն մեկ օր ախչկա պապ կիգա էդտեխ, կէլնի դուրս։ Կտեսնա զախչիկ, ինք զախչիկ կՃանչնա, ախչիկ չՃանչնա զինք։

Ինքն ուրեն կասե. «Կանի, ես հ՝եսօր իմալ օղյաթըմ խաղամ քու գլուխ»։

Ախչիկն օր զտղեն փաթեց ճղոր, էդ մարդ, գիշեր քնած վախտ հ՝ելավ գնաց ճղորի մեջ զէրեխեն մորթեց, զչախուն լե հըմալ արնոտ բերեց դրեց մամու ճեպ։ Լուսմութի քնուց հ՝ելան, հնչի ակրըտգա, տեսան օր տղեն քնուց չիմնա, ուրիշ օր շուտ կէլներ քնուց տղեն։

Իրիկ զորեց կնկա վրեն, էն խըդար օր սեր ուրանց թափեր են էրեխի վրեն, ասեց.— Գնա հանե, առ ու էկո, տեսնամ էդ տղեն ի՞նչ էղավ։

Տղի մամ գնաց, օր զբինդ հարձկեր, տեսավ օր տղի գլուխ դեմ պատավ, ջանդակ լե՝ դեմ ըմ։ Էդտեխ շիվարան մանցին։

Ախչկա պապն ասեց.— Հ՝որի՞ շիվարաք, էկեք փռովա էնինք, վիր մոտ չախու էլավ, էն է մորթի զտղեն։

Փռովա էնեցին, տեսան օր չախուն արնոտ՝ հանդե թալուկ մամու ճեպ։

Իրիկ էկավ օր զկնիկ սպաներ, ախչկա պապն ասեց.— Մը սպանի, սպանել ափսոս է։

Իրիկն ասեց.—Օր սպանել ափսոս է՝ ըպա ի՞նչ էնինք։

Ախչկա պապն ասեց.—Զէդոր աչքեր հանե, տար թալ վերվերի սարըմ, թըղ էնտեխ կրռկրռա, հընչի մեռնի։

Իրիկն ասեց.— Աղեկ կասիս։

Բերին էդ էրկուս ղկնկա աչքեր հանեցին, դրին ուր ճեպ, շալկեցին տարան, թալին վերվերի սարըմ ու թողեցին օր կիգեն, կնիկ յալվարըմիշ էղավ, ասեց.— Ախր էրիք, մեկ հեզ զիմ տղի ջանդակ լե բերեք, դրեք իմ խեչ, թողեք գացեք։

Գացին զտղի ջանդակ լե բերին, թալին մոր խեչ, թողին, էկան։

Էդտեխ, զէդ կնիկն ու էրեխեն օր թալած են, պզտիկ բուլըմ կեր։

Էրկու հատ հրեշտակ կտեսնան, օր կնիկըմ զաչքեր հաներ ին ու էրեխեն մը, բերած թալած էդտեխ։

Կէղնին ճնճղու պես, կիջնին՝ ղնեն վըր էդ բլին։ Որ կիջնեն դնեն վըր էդ բլին, հ՚իրարուց կհարցուն.

— Դու դինա՞ս, էդա ախչիկ վիր ախչիկն է։

Էն մեկելն ասեց.— Չէ, վալլահ, ես չըմ գինա։

Ասեց մեկելն.— Էդի էն մարդու ախչիկն է, օր ուր կնիկ մեռավ, կնկան լե ջուխտըմ թաժա սոլ կեր, մարդ ուխտ էնեց՝ չուրի էդ սոլի չափ օտկ չդտնա, չկարդվի։ Հ՚ուր օր ղարկեց, ղարկվավ, չգտավ։ Դառցավ էկավ տուն, ախչկան պատմեց. «Լաո, շատ օլըրտա, ըման քու մամու պես կնիկըմ չգտա, օր էդա սոլեր էղներ ուր օտներ՝ առնենք»։ Ախչիկն ասեց. «Է, իմա՞լ էնենք, աբո, խոմ մըզիկ չընք հ՚ելնի խեղդի, չէղավ չէղավ։ Ու կուղե զէդ սոլեր հագնի։ Օր կհագնի, ախչկա օտներով կէղնի։ Պապն կասե. «Քանի օր ուխտ իմ ընի՝ էդա սոլեր վիր օտներ էղնի, զէնի առնեմ, էդ հ՚իգամ, էդ էրթամ, զքզիկ կառնեմ»։ Ախչիկն կասե. «Է, աբո, պապ ղախչիկ իմա՞լ կառնե, չէ՞, մեղք է»։ Պապն անկամ չէնե, կասե. «Չէ, լաո, ուխտ իմ էնի՝ պիտի առնեմ»։ Պապն կէլնի օր էրթա, բարեկըմներ ժողվե, բերե, քեֆ ու ուրախութեն էնեն, պսակվեն՝ առնեն ղիրար։ Ախչիկ խելոք կէղնի, կբերե օսկի սնտուկըմ կիտա շինել, ներսեն կփակվի, բացվի, կառնե ուրեն քանի մը ավուր ղախերա ու կմտնի էդ սնտկի մեջ։ Պապ կիգա, կտեսնա, օր ախչիկ չկա, հ՚ուրվի կղարկե, ղարկվի, ախչիկ չգտնա։ Ինատ կէնե, կբերե էդ սնտուկ կթալե ծով ու կէլնի կընկնի ախչկա ետև։ Էնի հար թըղ էրթա, մենք դառնենք վըր սնտրկին։ Սնտուկն է, կընկնի ծովու երես, կէրթա պռուկըմ կէլնի դուրս։ Էդ պռուկ կէլնի դուրս։ Էդ պռուկ էրկու լողվոր ու զանկին մարդըմ կէղնեն կանուկ։ Էդ զանկին մարդ լողվորներուն կասե. «Բանըմ կիգա վըր ծովուն, իջեք հանեք. իսան էղավ՝ ընծիկ, օսկի ու արծաթ էղավ՝ ձըզիկ»։ Կիջնեն կհանեն օր օսկի սնտուկըմ։ Մարդ կիտա բոլամա փարա էդ էրկու լողվորներուն, կառնե սնտուկ, բերե տուն։ Էդ մարդուն կնիկըմ լե կէղնի։ Կէլնի ղկնիկ ճամբըցու ուր պապու տուն։ Ինք լե հ՚ըմնոր դուռ կփակե, կէրթա սար ավճութենի։ Օրըմ էդ տղեն ավճութենի կէրթա, ախչիկ կէլնի սնտրկեն, տախտ ու տուն կէնե, զատ կէփե, կես կուտե, կես կպահե. շայ կշինե, կես կխմե, կես կթողե շայդրնի մեջ. խահվեն կշինա, կես կխմի, կես կթողա ու կէրթա մտնի սնտրկի մեջ։ Մարդն է, օր սարեն կդառնա կիգա, կտեսնա, օր հ՚մեն բան հազր է, ջաշ կէղնի, կմնա։ Կմտածե, բանըմ չըկրոնա հանե հ՚իրարուց, դրկիցներուց կհարցնե, կասեն՝ մենք խապար չունենք, մեկըմ սալբխ չի տա։ «Օր հըմալ է,— կասե,— խըրար էղնի, լուսուն պիտի մնամ, տեսնամ՝ էդ որն է»։ Հ՚ելավ օր էրթեր նեճրութենի, չգնաց, խըստու զդուռ բացեց, մտավ դռան ետև։ Ախ-

չիկ, տեսավ օր սնտրկի մեջեն հ՝ելավ, ավլեց տուն ու տեխ. զ՝ամ ու զատ էնեց, կես կերավ, կես թողեց, շայ շինեց, կես խմեց, կես թողեց. խահվա շինեց, կես խմեց, կես թողեց։ Դառցավ կմտներ սնտուկ, վասեց ետևեն, բռնեց։ Ասեց. «Հ՝ու՞ր կէրթաս, դու՝ ընծիկ, ես՝ քզիկ»։ Ախչիկ ասեց. «Թե դուն ազապ իս՝ զիրար վայելենք, չէ՝ հիսնե վազ կեցի»։ Մարդ էդ տեխ զուր կարգվելն ինքյար էրեց, ասեց. «Ես ազապ իմ»։ Ախչիկն ասեց. «Մատամ օր դու ազապ իս, ես՝ քզիկ. դու՝ ընծիկ»։ Առան զիրար։ Մարդն լուսուն կէլներ, կէրթեր ավուխուշի, հ՝իրկուն կիգեր. գրկեր զուր կնիկն ու պառկեր։ Էդի թըղ մնա էդտեխ, մենք դառնանք էդ մարդու հ՝առջի ղոքնչի վրեն։ Էդ զոքանչն էր, գիշեր-ցերեկ կմտածեր, թե. «Էդ ի՞նչ տավի է էղի, հ՝առջին հեղ քանի իմ ախչիկ ուր մոտն էր, գիշեր-ցերեկ կիգեր մըր մոտ, կէրթեր. զկնիկ օր ճամբցուց էդա տեխ, էլ իսկի մըր ետևան չի գա, վայ թը էդ տղին բան է էղի, օր իսկի մըր հանդավորիկ չերևա»։ Ուր ախչկան ասեց. «Վաղ պիտի էրթամ, տեսնամ կա՞, չկա՞, ա՞ղ է, դառնամ իգամ»։ Լուսմութի շուտ հ՝ելավ, հ՝ընկավ ճամբախ։ Հ՝իրկուն էր, հասավ փեսի մոտ։ Տեսավ օր փեսեն նստեր էր, հաց կուտեր։ Գնաց բարև տվեց, զբարև առավ ու նստավ։ Օր նստավ, վերուց զոքանչն ասեց. «Է, փեսա ջան, իմա՞լ իս, սալամա՞թ իս, էդա էրկու ամիս կէնե, օր մըր ետևան չըս էկի»։ Փեսեն ասեց. «Տո, ջոջո, ինչ կհարցուս, էդա էրկու-իրեք օր կէնե՝ հ՝ելեր իմ»։ Տղեն էդ խոսալու մեջն էր, պառավ զօսկի սնտուկ տեսավ։ Օր տեսավ, դարձավ տղեն, ասեց. «Օր դու հիվանդ իս էղի, էդա սնտուկ ո՞ր բերեց քզիկ, հ՝ուստի՞ իս գնի»։ Տղեն ասեց. «Ջոջո, վալլահի, էդ սնտուկ աստված է տվի ընծիկ, երեկ չէ մըկլօր ձուկ իմ քեֆ հուզեց, էրկու լողլորդ առա, գացի ծովու պռուկ՝ ձուկ կբռնենք։ Տեսա օր բանըմ ծովու վրեն կիգեր, ես լե վերցի էդ լողլորդներուն ասի՝ էդա բան օր ծովու երես կիգա, թե օր օսկի, արծաթ էղավ՝ ձըզիկ, իսան էղավ՝ ընծիկ։ Էկավ, էկավ, օր էդ սնտուկն է, էլ չըկառցան օր հ՝իրարու վրեն կիսեն, տվի քանի մը օսկի ուրանց, փայեցին վիրարու, առա սնտուկն ու էկա»։ Տղեն օր հմալ ասեց, պառավն ասեց. «Ալավոկի զէդ սնտուկ կիտաս, տանեմ, իմ ախչիկ թամաշա էնե»։ Տղեն էդտեխ հ՝ընկավ մտածմունքի մեջ. «Ես իմա՞լ էնեմ, թե իտամ՝ վայդե կնայեն, ախչիկ մեջն է, վնասեն, թե չիտամ, յախա չըմ կրոնա սուրմիշ էնի պառվու ձեռկեն»։ Չըկրոցավ բեճարմիշ էներ, օր չիտեր, տվեց սնտուկ, պառավ հ՝ելավ, առավ ու գնաց։ Տարան տուն, մամն ու ախչիկ ֆքրան, օր էդի ծանդր է, բանըմ կա մեջ ու փակ լե ներսևանց է, ասին՝ վալլահի մենք զէդի պիտի դնենք վըր կրակին, հալենք, ախըր օսկի է, տեսնանք ի՞նչ կա մըջ իդոր։ Պառավ բերեց քողըմ կրակ էրեց, վերուց զսնտուկ ու գրեց վրեն։ Սնտուկ օր տաքցավ, էլ ախչիկ չկրոցավ օր տոմեր, զդուռ բացեց, միջեն հ՝ելավ դուրս։ Զախչիկ օր տեսան, մերն

ու ուր ախչիկ թափան վրեն, հմալ զարկին, օր խելք գնաց, պատավ գետին։ Դարձան, դրին սնարկի մեջ, զդուռ փակեցին, ճամբեցին, էկավ մարդուն։ Մարդն է, հ՝իրկուն տեսավ օր տրքուն կիգա սնտրկի մեջեն. հ՝ելավ գնաց իշքեց, օր ախչիկ ծանդր կտքա, հիվանդ է։ Պոռաց. «Ախչի, ախչի, զդուռ բաց, հ՝ելի տեսնանք ի՞նչ է էղի քզիկ»։ Ախչիկ ներսի դիեն հերսոտավ վրը էրկան, ասեց. «Կուռատալ է էղի, դու օր դիներ հմլա է, դիս հ՝որի՞ ճամբրցուցիր, օր դիս չարդեն մերն ու ախչիկ, բալքիմ քու ուչկ քոններ»։ Ասեց ու զդուռ բացեց, հ՝ելավ մեջեն։ Մարդ տեսավ, օր ախչիկ հատեն հիվանդ է։ Հ՝ելավ տաս-տասնհինգ օսկի տվեց հեքրմին, յուրեց, կնկա վրեն շաբաթըմ էրեց դեղ, սաղցավ, հ՝ելավ կանավ օտաց։ Մնաց ժում ու ժամանակըմ։ Էգոնց խորոտիկ տղե մը էղավ, իրիկն ու կնիկն էդ տղից շատ հազ կէնեն. գիշեր-ցերեկ կպագնեն, կուրախնեն վրեն։ Էն մեկ օր էդ մարդ զուր խասում-խրսրմներ կանչեր էր, կուտեր, կխմեր։ տղեն լև ուրանց հետն էր։ Միամիտ տեսան՝ մարդըմ դոնեն ներս մտավ։ Տվեց բարև ու տեխ տվին նստավ էգոնց խեչ։ Էդ մարդ ախչկա պապն էր։ Ինկ զախչիկ ճանչցավ, ախչիկ զինկ չճանչցավ։ Կեր ու խում էրին հընչ հ՝իրկուն, հ՝իրկուն էդ մսաֆըր մարդն ասեց. «Խըրար ու խասամ էղնի, հ՝էսօր գիշեր օղյաթըմ խաղամ էդա ախչկա գլուխ»։ Տղեն փաթեցին ու իրիկ կնիկ պառկան, քնան։ Ազեկըմ օր զուրանց քուն առան, էդ մարդն հ՝ելավ առավ ղչախուն, գնաց, զտղեն մըչ օրոցին մորթեց ու բերեց զարնոտ չախուն թալեց մամու ճեպ ու ինկ էկավ, պառկավ քնավ։ Լուսմութի հ՝ելան, հընչի ակըրտգահ բաքլամիշ էրին, տղեն չիմցավ, մարդն կընկան ասեց. «Կնիկ, հ՝էսօր ի՞նչ էղավ մըր էրեխին, ուրիշ օր շուտ կիմներ, հերկ է քնի, գնա հ՝իմցու, առ ու էկո»։ Կնիկ գնաց, ղբինդ օր հարձրկեց, տեսավ օր տղի գլուխ մեկդին, ճանդակն էլ մեկդին, քըրպու ուշք հ՝ընցավ, հ՝ընկավ դետին։ Իրիկն էկավ, տեսավ, օր կնկա ուշկ հ՝ընցեր է, հ՝ընկի գետին, էրեխեն լե վիզ կտրուկ, դրուկ ճըղոր, քիչըմ ախ ու վախ էրեց, լաց, կնիկ հեշրցավ հ՝ելավ, օր հեշրցավ հ՝ելավ, ասեց. «Կնիկ, աստված զքու տուն ավիրե, զիմ էրեխեն դու մորթեցիր»։ Կնիկն ասեց. «Խում ես ջհուդ չենք, զէդ տղեն մորթեցի»։ Էդ մսաֆըր մարդն թռավ էնդիեն, ասեց. «Քելեք էրթանք էնինք փրռովա, վիր ճեպն օր արնոտ չախու էլավ, էն է մորթի»։ Փրռովա էրին, տեսան օր արնոտ չախուն հանդե թալուկ կնկա ճեպ, ասին՝ դու ես մորթի։ Մարդն ասեց. «Կնիկ, վալլահի, ես զքի պիտի սպանեմ»։ Մսաֆըրն ասեց. «Հ՝ո՞րի կսպանես, թող ուր աչքով զուր հաճեպ տեսնա, քանի օր էդի զէդա մատղաշ էրեխեն մորթեց, պետկ է զէդոր աչկեբ հաննես, տաննես սաղ թալիս վերվերի սար, էնտեխ կըռկըռա, հընչի մեռնի։ Իրիկն մսաֆըրին ասեց. «Վալլահի, աղեկ

կասիս, ես զքու խոսք պիտի էնեմ»։ Հ՚ելավ ըկնկա աչկեր հանեց, թալեց ուր ճեպ, շալկէցին զկնիկ, տարան, վերվերի սար Ֆալին ու Թորկին էկան։ Օր Թորկին էկան, կնիկն յալ՚լաշմիշ էղավ, ասեց. «Զաստված օր կսիրեք, ախըր զիս սոսըրթեցիք, զիմ տղի ջանդակ լե բերեք, դրեք իմ կուշտ ու թողեք գացեք»։ Գացին զտղեն բերին, դրին ուր կուշտ ու թողին գացին։ Ըշթա էդա էն կնիկն է, էդա պզտիկ լե՝ ուր էրեխեն. երանի ուրնն հ՚իմաց էղներ, ինչ օր ըսենք, հասկներ, օր հ՚իմաց լե չէ, խոզի էրզի մեջ տեսներ։ Էդա թեքուր· հանդե ես կթալէմ, զէդ թեքուր գտներ, էրթեր ֆլան կոլ, վերցներ տիլ, քսեր վըր ուր աչկերուն։ Իմալ ասի, ուր աչկեր լե թալուկ են ուր ճեպ, հանե դնե ուր աչկերու տեխ ու թեքուր զարկե մըջ կոլին ու քսե վըր ուր աչկերում, կսաղնա, կէղնի ավալկու աչկեր։ Դառներ վերցներ տիլ, քսեր տղի վզին, զգլուխ դներ վրեն ու զթեքուր ջրոտեր, զարկեր տղի վզի վրեն, կսաղներ։ Օր սաղնեն խըլըսեն, հ՚իգեր էդա բըլի տակ փորեր, հանդե սուֆրե մը, վարոցըմ ու օսկի թասըմ, բըլի տակն էր, հաներ, առներ էրթեր, զուրանց իդարեն էնեն։

Կնիկ հ՚իմաց էր, օր էդ էրկու էղըվնեկ հ՚իրարու հետ կխոսեն։ Քուռեց քոռ հ՚ելավ, գտավ զտղի ջանդակ ու առավ գնաց էղըվնեկներու ասած կոլի խեչ դրեց ու դառցավ էկավ զթեքուր գաշեց, գտավ, առավ ու գնաց։

Գնաց վըր կոլին, հանեց զուր աջ աչկ, արեց ճափ դին, ճափն դրեց աջ դին, բերեց զտիլ քսեց, զէդ թեքուր զարկեց մըջ կոլին ու քսեց վըր աչկերուն։ Աչկեր սաղցան, էղան զավալկուն, բըլե ճախար կիշքեր։

Դառցավ բերեց զտղեն, տիլ քսեց վզին ու զգլուխ վերուց դրեց վրեն, զթեքուր զարկեց մըջ կոլի ջրին, քսեց վրեն։ Տղեն քիփ հ՚ելավ, ինչ օր զավալկուն՝ կանավ ու գըըվըլաց։

Հոկուց հ՚ելավ, գնաց բըլի տակ, օր ասեր են էղըվնըկներ, սազեց փորել։ Քիչըմ փորեց, տեսավ օր սուֆրե մը հ՚ելավ։ Սուֆրեն հ՚իրարուց բացեց, տեսավ օր կանաչ վարոցըմ ու օսկի թասըմ հանդին մըջ սուֆրին, ծալեց ու առավ սուֆրեն, էկավ տղի մոտ։

Վերցուց զվարոց, զարկեց սուֆրէն։ Տեսավ օր աստվածութեն ինչ նոմաթ օր ստեղծեր էր աշխըրկի մեջ, թափավ մըջ սուֆրեն։

Ուրանց կուշտ կերան, խմեցին, ծալեցին սուֆրեն, դրին մեկ գին։

Մնաց ժամ ու ժամանակըմ։ Տղեն մեծցավ։ Օր մեծցավ, բերեց ուրանց քարե տունըմ շինեց, մանցին մեջ։

Օրըմ հ՚իրկուն մամ ու տղեն պառկան օր մըժլեն, տղեն մամուն ասեց.— Նանե, էդ հաղուն դու մանցի ցերեկներ հ՚ոդա, ես լուսուն կէլնիմ, էրթամ սար նեճրութենի։ Բանըմ զարկեմ, բերեմ, մըզիկ էփենք ուտենք»։

Լուսմութի տղեն հ՝ելավ, առավ զուր թֆանքն ու գնաց սար։ Գնաց սար, տեսավ օր մեծ հավորիկըմ գրեր է փալ. տղեն նշան առավ ու զէդ հավորիկ զարկեց պատուց։ Հասավ վրեն, չըկառցավ, ուր խվաթ չհաղթեց, նեճիր դուավդով էր ու ինք պզտիկ։ Առավ զնեճիրն ու գլորվավ, ինք վըր նեճրին, նեճիր վըր ուրեն, հընչի հ՝իշան գըրի տակ։ Էդ տեխ տասքսան ձիավոր էկած են նեճրութենի, զէդ պզտիկ տղեն տեսան։ Ձիավորներու մեծն ասեց.— Աստված սիրող թրդ էրթա, զէն նեճիր բռնե. ղնե տղի գիրկ. տես օր էնի մատըմ էրեխե մ՝է, նոր էկավ ու զէն նեճիր զարկեց, մենք՝ էդա էրկու-իրեք օր կէնե, էկեր ենք, չընք կըռցի հավորիկըմ դարկի։

Մշկներ հասան, վերցին զնեճիր, դրին տղի գիրկ ու զտղեն դրին ճամբու։

Տղեն է հ՝իրկուն էր, առավ զնեճիր, էկավ տուն։ Ինչ օր ուր գլուխ էլեր էր մամուն խբսա էրեց։ Մամն ասեց.— Լաո, լուսուն օր գացիր, էդ մարդիկ հ՝ըռաստ էկան քզիկ, հ՝իրկուն կառնիս հետդ, կիգաս մզիկ խոնախ։ Տղեն լուսմութին մեկ լե հ՝ելավ, առավ զուր թֆանք ու էկավ։ Իշքեց, օր էդ ձիավորտանք մեկ լե էդ տեխրանք կօլըրտեն, բանըմ չասաց, իշքեց ուր նեճրին։

Հավորիկըմ էն թարաֆեն էկավ, կընցներ, զարկեց հավորիկն, թռավ էդ տեխեն, գնաց պատավ էդ ձիավորներու հ՝առեջ։

Տղեն ասեց.— Վալլահի, ես էդ հավորիկի ետև չգացի, էդի էնոնց խսմաթն էր, օր թռավ, գնաց էնդոնց հ՝առեջ պատավ։

Էդ ձիավորներու մեծ ուր մըշկներուն ասեց.— Գացեք զէդ հավորիկ բռնեք, տարեք տվեք էդ պզտիկ տղին, էդի էմլե երեկվան տղեն է։

Մշկներ էկան զհավորիկ բռնին, տվին տղի գիրկ։

Տղենն ասեց.— Շատ աղեկ, էդա էրկու օր դուք ընծիկ ազեկութեն կէնիք, ըպա հ՝եսօր չը՞ք հ՝իգա, էրթանք մըր տուն խոնախ։

Մշկներ ասին.— Էրթանք, մըր աղին ասինք, օր էկավ՝ կիգանք։

Գացին, ուրանց մեծվորին ասին։ Մեծվորն ասեց.— Վալլահի, էդ տղի արուն շատ կեռա վըր ընծիկ, ես զէնդոր խաթր պիտի չկոտրեմ, պիտի էրթամ էնդոր էղնիմ հ՝էսօր խոնախ։

Հեծան զուրանց ձիանք, քշին էկան հասան տղին, առան զիրար ու էկան տղի տուն։ Օր էկան տղի տուն, մամն հ՝ելավ հ՝առեջ, զուր խոնրխներու ձիանք քաշեց ներս, դարման լցեց ու հանեց վի, տեխ թալեց, նըսաեցուց։

Օր նստեցուց խըլըսավ, մամն էդ տեխ զտղեն կանչեց, ասեց.— Լաո, հենա մեկ իմ պապն է, հենա մեկ լե քու պապն է, իմ պապ մշակն է։ Օր

բերեցիր ուրանց հաց դրեցիր, կերան, ջուր խմին, կբերիս զօսկե թաս, գողտուկ կդնիս քու պապու ճեպ։

Տղեն ասեց.— Նանե, էդի իմ պապ հ՝որի՞ պիտի էղնի։ Խարիպ մարդ էր, քանի օր դու ըսեցիր՝ բի մսաֆըր, ես լե քու խոսքեն չէլա, առա էկա։

Մամն ասեց.— Լաո, քզիկ ի՞նչ լախա կա, ես ինչ օր կասիմ, դու ընծիկ անկաճ կէնիս, օր չէ՝ աստված զքու բան հաչողե։

Տղեն ասեց.— Քանի օր դու ասեր իս, ես լե քու խոսքին չպիտի հ՝ելնիմ։

Բերեց զսուֆրեն փռեց, զկանաչ վարոց զարկեց վըր սուֆրեն, ինչ օր աստվածութեն ստեղծեր էր, թե զատից, թե էմշից, թե հ՝ըմեն բանից լցվավ սուֆրին վրեն։ Կերան խմին, քեֆ էրին։ Տղեն բերեց զօսկի թաս, գողտուտիկ դրեց էդ մարդու ճեպ։ Քիչըմ մնաց, էդ մեծ մարդ ջուր հ՝ուզեց, հուրվի զարկվան՝ օսկի թաս չկա։

Տղեն գնաց մամուց հարցուց.— Նանե, օսկի թաս դո՞ր է։

Մամն ասեց.— Լաո, դու իս ջուր տվի ուրանց, ես ինչ գինամ դո՞ր է, էն դարուբար իշքե։

Շատ գաշեցին՝ չգտան։ Աղեն մտածեց, ասեց. «Վայղե մշկներ վերցին»։ Ասեց.— Տեսեք, կէէնիմ կիշքեմ, որ մեկ մշկի մոտ էլնի տղի թաս, զէնգոր վիզ կկտրիմ։

Մշկներ ասին.— Թըղ էղնի։

Ելավ, վիր մոտ իշքեց, չգտավ։ Մնաց ինք մեկի առանց փրովա էղնել։

Ասեց.— Կուզեք, էկեք իմ ճեպեր լե իշկեք, խոմ ես զէդ թաս չգողցա՞։

Ու զձեռք խոթեց ուր ճեպ, տեսավ օր թաս հանդե՝ ուր ճեպ։

Օր թասն ուր ճեպ հ՝ելավ, էղավ կուս էրկաթ ու ինքն ուրեն կասեր. «Ես դարիպ մարդ, էդսա խդար պատվով, պզտիկ տղեն սարեն զիս իկրամ էնեց, առավ էկավ, վերջ ու վերջո թաս լե գողցան, իմ մոտ հ՝ելավ, էդ իմա՞լ կէղնի, ես ի՞նչ էրսով իմ մշկներու հետ խոսամ, դուրս ու ներս էնիմ»։

Տղեն տեսավ օր էդ մեծ մարդ շատ մարախ կէնե, ասեց. «Մը մտածի, շատ մարախ մ՝էնի, ինչ խդար օր դու էդ թասի գողութենից խաբար ուներ, էնքան լե իմ մամ իմ մորթելուց խաբար ուներ, իմալ օր դու միամիտ ու ամութամ էր, քու աստծու ճամբու հետ, իմ մամ լե հրմալ ամութամ էր ուր աստծու ճամբու հետ։

Ասեց ու գնաց զմամ փարդի տկեն առավ, էկավ։

Ասեց.— Էդա քու կնիկն է, ես քու տղեն իմ, էդա լե քու աներն է ու հրմկա քու մշակ, զիս էդ մարդ մորթեր է։

Տղեն օր հմալ ասեց, էդ մեծվոր մարդ հ'ելավ, զմշակ մորթեց, վերուց զուր կնիկ ու տղեն, դառցավ էկավ ուր տուն, նոր էղան էրիկ ու կնիկ ու վայելեցին զիրար։

Աստծուց հ'իշավ իրեք խնձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե՝ անկաճ էնողին։